ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<01>> << նոյեմբեր>> 2016 թ N 115

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱՍԻՄ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Գերասիմ Անդրեասյանի հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 1-ի N187 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը, 2016 թվականի հոկտեմբերի 19-ի N 01/14/6583-16 ծանուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2016 թվականի նոյեմբերի 1-ից լուծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Գնդևազի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Գերասիմ Անդրեասյանի հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 1-ի N187 աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել ընդունման-հանձնման աշխատանքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրմանից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ